

## ԱՐՏԱՇԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ԳՐԱՔՆՆԱԴԱՏ

Ա. Գ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Գրադասակցի հայ դրականության պատմության մեջ իր ուրույն տեղն ունի բանաստեղծ, արձակագիր և գրաքննադատ Արտաշես Հարությունյանը: Նրա յիշրը հատկապես նշանակալի է գրաքննադատության բնագավառում:

Անցյալ դարի 90-ական թթ. համիդյան ռեակցիայի ճնշման ներքո հայ մտավորականության շատ ներկայացուցիչներ ստիպված անցել էին Եվրոպա: Մնացած դրական մշակներից շատերը կամ լռում էին, կամ էլ քննում չեզոք հարցեր, մտքի ու լեզվի վրա դրված գրաքննության կապանքների պայմաններում դեպի լռում էին լրագրության, բանաստեղծական ձևամուտությամբ: Արձակը ևս շնչահեղձ էր լինում գրաքննության խիստ սահմանափակումներից:

Այդ շրջանում, երբ Արշակ Չոպանյանը գտնվում էր արտասահմանում, արևմտահայ մշակութային կյանքում սթափ կանխատեսումներով ու անաչառ գրախոսություններով իշխում էր Արտաշես Հարությունյանը, թեև կտրված էր դրական կենտրոններից, քանի որ նրան արգելված էր դուրս ելնել հայրենի Մայրաքաղաք Ղյուղաքաղաքի սահմաններից<sup>1</sup>:

Հարությունյանը գրական ասպարեզ է մտել չափածոյով, որը շնչում է ժողովրդական կյանքի կենդանի տարերքով: Նրա բանաստեղծական ժառանգությունն իր ինքնատիպ մտածողությամբ և գեղարվեստական հարցադրումներով ներկայանում է որպես XIX դարի վերջի և XX դարի սկզբի արևմտահայ պոեզիայի դարգացման կարևոր օղակներից մեկը: Հարությունյանն ունի նաև խոհափիլիսոփայական արձակ էջեր, որոնք մեծ մասամբ իմաստասիրական խորհրդածություններ են բնության ու կյանքի մասին, իրազեկի խորաթափանցությամբ արված ընդհանրացումներ՝ գրականության, գրական սեռերի և ուղղությունների վերաբերյալ: Բանաստեղծություններ ու արձակ էջեր, դիմա-ստվերներ ու գրախոսություններ, քրոնիկներ, հրապարակախոսական ելույթներ, մանկավարժական-հոգեբանական ուսումնասիրություններ, գրական-տեսական բանավեճային հոդվածներ, կրոնաքաղաքագիտական հարցերի քննություններ, ռուս և արևմտաեվրոպական նշանավոր գրողների գրական վաստակի արժեքավորումներ, ֆրանսերեն լեզվով գրախոսություններ և թարգմանություններ, հարուստ նամականի՝ ահա Հարությունյանի ստեղծագործական ժառանգության ամփոփագիրը: Այս բեղուն ժառանգությունը վկայում է գիտնականի ու արվեստագետի բազմակողմանի իմացության մասին:

Դժվար է ներկայացնել գրական շարժման բնութագիրը, երբ այն լրիվ չի դրսևորվել և գրողի ստեղծագործական վաստակի ճշգրիտ արժեքավորում տալ, երբ այն պատմություն չի դարձել: Գրականության պատմության համար կարևոր է, թե զրոյը ինչպես է զնահատվել ժամանակակից մշակութային պրոցեսում: Այս առումով իր ժամանակի ստեղծագործողների մասին Հարությունյանի արժեքավորումները տասնամյակներ անց էլ այժմեական են ու քննություն են բռնում: Նա կարողացել է առաջին իսկ երկի հիման վրա կռահել ու ցույց տալ ճշմարիտ տաղանդի ինքնատիպությունը, կանխատեսել նրա հետագա զարգացման ուղին:

Այսպես, Միսաք Մեծարենցի անդրանիկ ժողովածուի գնահատման առիթով դարասկզբի քննադատական միտքը բաժանվեց երկու բանակի<sup>2</sup>: Հով-

<sup>1</sup> Արտաշես Հարությունյանը Կ. Պոլիս տեղափոխվելու իրավունք է ստացել 1912 թ.:

<sup>2</sup> Հարցի մանրամասն քննումը տե՛ս Ա. Շարուրյանի հոդվածում («Բանքեր Նրեանի համար-սարանի», 1979, № 1, էջ 21—36):

Հաննես Գազանչյանը, քերթողին գնահատելով որպես «հուսալից տաղանդ», նրա ժողովածուում տեղ գտած «բանաստեղծական խկատիպ գոհար գյուտերի» և շուտով բառագանձի կողքին նկատում է «կարգ մը փոշոտ, անզործածելի և անիմաստ բառեր»։ Ըստ քննադատի, սիմվոլիզմի ազդեցությամբ գրված հոգեբանական ապրումների որոշ բանաստեղծական վերարտադրություններ «ոչ տեղական ու վերհիշելի»<sup>3</sup>, խորհուրդ չպարունակող երգեր են։ «Մասիսի» խմբագիր Ենովք Արմենը բանաստեղծին անվանում էր ստեղծագործական երևակայությունից զուրկ «ինքնախաբ դառնացող» և նրա չափածո վաստակը դիտում որպես տրամաբանական ու գեղարվեստական էական նկարագիր չունեցող։ Քննադատ Փայլակը (Ժակ Սայապյան) անտեսում էր քերթողի տաղանդի իսկությունը, անարվեստ էր համարում քերթվածների բովանդակության ու կառուցվածքի մեջ էական գեր կատարող տաղաչափական ձևերի դրսևորումները։

Գրական այս մթնոլորտում Արտաշես Հարությունյանը հանդես եկավ իր որոշակիորեն հիմնավորված ասելիքով։ Քննադատը, ըստ արժանվունյն գնահատելով Մեծարենցի «Միածան» ժողովածուի լեզվի առանձնահատկությունները, շեշտում էր նրա բառագանձի արժանիքները։ Նա իրավացիորեն պնդում էր, որ կենդանի լեզուն չունի մեռած լեզուներին հատուկ վերջնական կադապար։ Այն, անշուշտ, փոխվում և շրջվում է, քանի որ ապրում է։ Զիֆթե-Սարաֆին նվիրված հոդվածում քննադատն այն միտքն է հայտնում, որ լեզուների ուրույն արժեքը պայմանավորվում է նրանց անհատական նկարագրով։ Նա գնահատում է լեզվական փոխանցումներն ու ներմուծումները՝ որպես այդ արժեքը բարելավող և նրա կենսունակությունը պահպանող ու սնուցող ուժ։ Այս առումով Հարությունյանն անառարկելի գնահատական է տալիս Մեծարենցի գրական ժողովածուի լեզվի առանձնահատկություններին։ Ժամանակի գրական մշակների ստեղծագործական լեզվի բառասլաշարի «անհանձար ու անճարակ...», անգործածական... ծանրաբեռն պերճանքով պճնազարգված» խոսքին հակադրում է Մեծարենցի «անսահման գունագեղ բառը»<sup>4</sup>։

Գրական սկզբունքայնությամբ առաջնորդվող Հարությունյանը դրում է. «...Միսաբ Մեծարենց լավ բանաստեղծ մըն է, և առաջին հարվածով իսկ իր դեմքը կը հատկանշվի արդի նոր պոլսահայ բանաստեղծներու պատկերաշարին մեջ։ Եթե այն մուսներն այնքան շատ կնմանին իրարու, Միսաբ Մեծարենցի լավագույն արժանիքներն մին է քիչ նմանիլ անոնց ու մեծավ մասամբ չնմանիլ անոնց»<sup>5</sup>։ Հարությունյանը գնահատում է քերթողի ստեղծագործություններում դրսևորված ինքնատիպ զգացմունքների գունեղ արտահայտությունները, դարասկզբի տարամետ գրական հոսանքների ու դպրոցների ազդեցությունից անկախ քնարական անհատականությունը։ Ընդգծելով ժամանակակից արևմտահայ պոեզիայի համար բնորոշ դարձած հոետորական գիծը, ձևապաշտական ինքնապատակ հնարանների օգտագործումը, սալոնային գրականության տափակ ու անարժեք արտահայտությունների դրսևորումները, Հարությունյանը գնահատում է գեղարվեստական կույուն սկզբունքներով առաջնորդվող բանաստեղծի ինքնատիպությունը։

Բնույթական ստեղծած տառապանքի ու հուսահատական բողոքի պայմաններում Մեծարենցի քնարը հնչեցնում էր անանձնական պոեզիայի լարը։ Գրական մոռյլ մթնոլորտում պոետը գեղարվեստականացնում էր համամարդկային զգացումներ։ Այս հատկանիշի ընդգծումով էլ Մեծարենցի երգերի հասարակական տրամադրությունների գնահատման գեղարվեստական ելակետը քննադատ Հարությունյանը պայմանավորում է գեղարվեստական այն խոր համոզումով, որ «...եսը անհատական է այնքան, որքան տիեզերականորեն մարդկային»<sup>6</sup>։

3 «Արեւելյան մամուլ». Կ. Պոլիս, 1907, № 29, էջ 701, 702, 703։

4 Է. Գ. Զրբաշյան. Միսաբ Մեծարենց. Երևան, 1977, էջ 162։

5 Արտաշես Հարությունյան. Գիշերվան ճամփորդը, էջ 248։

6 «Գրական ասուլիսներ». Զ. Կ. Պոլիս, 1913, էջ 290։



«Ամեննէն առաջ ճշտել արվեստագետին անկեղծութեան աստիճանը ու սահմանել անոր ստղանդին անձնական նկարագիրը», — գրաքննադատի այս տեսակէտը սկզբունքով Հարությունյանը պահանջում էր երգերը «հասկանալ ու լալալալալ մանավանդ»։ Այդ մեկնումով էլ գրախոսը Մեծարենցի մեջ տեսնում «դժվարահաս ռոմանտիկ հոգի մը», որ կյանքի իդեալ գեղեցկութիւններին համար ունի հուսախաբումներ ու ըմբոստացումներ և իր քնարի «բազմաստիկ թելերուն վրա» «ներհակ ու դանազանակ նկարագրով» հնչեցնում է Հուլիսի, Յալի, Երազի ղղացումներով, սիրո, սուգի, հիացումի պաշտամունքով օժտված քերթվածներ՝ կենսալիւր ջեմությամբ, խոր պագողութեամբ։ Բանաստեղծի այնպիսի հոգու ելեւէջները («Յայգն է պայծառ») Հարությունյանը որակում է ճիշտ ու ճշմարիտ։ Նույնքան անկեղծ ու սրտասույզ շեշտեր է նկատում «նավակներս» բանաստեղծութեան մեջ, ուր պոետն «անձնակարգութեամբ կրճատել» իր Հուլիսներուն ու Երազներուն բեռնավոր հեռագնաց նավակներուն ևտեւնէն։

...Դարձուցե՛ք նավակներս հողմավար, ջրանո՛ւյշ պարիկներ  
Դարձուցե՛ք նավակներս դուրավար, իրիկվա՛ն հովիկներ»<sup>8</sup>։

Քննադատ ենովք Արմենը Մեծարենցի՝ «բռնաղբոսիկ կերպով ընթերցողը ապշեցնող», «գաղափարազուրկ» երգերում տեսնում է «քովերով խենդ ու խելառ բռն»-ի կուտակում և հարցնում. «Ձոհրապ, Սիպիլ, Հարությունյան և դեռ այնչափ ուրիշներ իրենց բանաստեղծական սիրուն էջերով՝ ընթերցողը հիացնելու համար այս այլանդակութիւններուն պետք ունեցած են»<sup>9</sup>։ Ժամանակը ցույց տվեց, որ ո՛չ Ձոհրապն ու Սիպիլը և ո՛չ էլ Արտաշէս Հարությունյանը իրենց չափածոյով չեն կարող չափվել, Հարությունյանի բնութագրումով՝ «առանձնաշնորհյալ ղղացողութիւն»-ով օժտված հանճարի հետ։ Ժամանակը ապացուցեց քննադատի կանխատեսման աներկբա իսկութիւնը. «Ասիկա ճշմարիտ բանաստեղծ մըն է, խորին և մարդկային անկեղծութեամբ մը բաբախում... Այս բանաստեղծը խորհրդածութեան խարխալներ ունի։ Այս բոլոր թանկագին հատկութիւններուն պատճառով, Միսաք Մեծարենց սրտագրավ և հուղիչ բանաստեղծ մըն է... անկեղծորեն մեկամաղձոտ... Ասիկա մանաւանդ արդունք է կյանքը խիստ անսովոր և առանձնահատուկ ճաշակով սիրելու եղանակի մը... Ասիկա նշանն է դժվարապահանջ, ղղայուն հոգիի մը, որ կյանքին իդեալ գեղեցկութիւններուն ի խնդիր, կ'հօծէ կամ կ'գոռա իր հուսախաբութիւններն ու ըմբոստացումները... Այս նորեկին մեջ՝ սրտագրավ ու ջերմաշունչ տաղանդավոր քերթող մը կը հայտնվի, որ ապահովապէս գրական խիստ ուշագրավ ապագա մը կ'իստատանա»<sup>10</sup>։

Հետաքրքրական է նաև Մեծարենցի գրական դավանանքի հանդեպ ժամանակի քննադատական վերաբերմունքը և այդ հարցում Արտաշէս Հարությունյանի դիրքորոշումը։ Քերթողը մեղադրվեց «արվեստի ճշմարիտ և ցանկալի ուղուց մոլորանքի ու սայթաքումի»՝ սիմվոլիզմի պարագլուխ դառնալու մեջ<sup>11</sup>։ Արեւելահայ քննադատներից Մինաս Բերբերյանի կարծիքով Մեծարենցը «սիրում է խոսել սիմվոլներով ու տարօրինակ ձևեր ունի»<sup>12</sup>։ Մի այլ գրախոս ընդգծում էր բանաստեղծի պերճ մնալը «այդ ֆաթալ ներգործութիւններն»։ Չոպանյանի կարծիքով քերթողի յուրատիպութիւնն այն է, որ սիմվոլիզմի սովորութիւններ կարողանում է միահիւսել հայրենի ժողովրդական երգերի մոտիվներին։ Համարյա նույն կարծիքին էր և Հ. Սիրունին։ Հրանտ Բա-

7 Արտաշէս Հարությունյան. Արձակ էջեր ու քերթվածներ. Փարիզ, 1937, էջ 161։

8 «Գիշերվան ճամփորդը», էջ 251։

9 «Մասիս». 1908, № 20, էջ 249։

10 «Գիշերվան ճամփորդը», էջ 249, 250, 253։

11 Տե՛ս ենովք Արմենի հոդվածը, էջ 274։

12 «Արարատ». էջմիածին, 1908, Ե—Զ, էջ 495։

լույսանը, վաղամեռիկ բանաստեղծի մահվանից 20 տարի անց անդրադառնալով նրա գրական վաստակին և ներկայացնելով պոեզիայի մասին Պոլ Վեռլենի կարծիքը՝ «երբեմն երաժշտականությունը միանալով տարտամ անորոշության հետ կուտա ընթերցողին այն՝ ինչ որ ստեղծագործության մեջ կապակսի», — ավելացնում է. «Իսկապես, երբեմն գրչի խաղերը այնպիսի երաժշտականություն մը կը ստեղծեն, որ ատոր ազդեցությամբ կը սկսինք մեր հոգիներս զգացումներ արթնացնել, որմե բացարձակապես զուրկ է բանաստեղծը: Մեծարենցն էլ երբեմն խորքին թերությունները կը հարգարե արվեստով խորհրդապաշտներու ազդեցության տակ»<sup>13</sup>: Զապել Նսայանը «Գրական թերթի» 1935 թ. № 14-ում քերթողին Տերյանի հետ միասին որակում էր որպես «հարազատ ու տաղանդավոր անդամներ սիմվոլիստական գրական մեծ ընտանիքի մեջ»<sup>14</sup>:

Իրողությունն այն է, որ ժամանակի գրական-գեղարվեստական մթնոլորտը, հասարակական-գաղափարական մի շարք հանգամանքներ, ֆրանսիական ու անգլիական բանաստեղծությունների ընթերցանությունը որոշ չափով ազդել էին Մեծարենցի նախասիրությունների ու գեղարվեստական-ստեղծագործական սկզբունքների վրա: Կրելով սիմվոլիզմի որոշ ազդեցություն, նրա գիրքերգություններում հատկապես արտահայտվել են հասարակությունից, իրականությունից հեռանալու և մենանալու տրամադրություններ, որը և նրան սիմվոլիստ բանաստեղծ համարելու պատճառ է դարձել: Սակայն պետք է պնդել, որ նա սիմվոլիստ չէ: Այդ մասին կա և Մեծարենցի խոսքը. «Ի՞նչ են այն խոշոր բաները (ռազմիրա, ռահահորդ, առաջնորդ, առաքյալ), զորս անունիս կցելու տխրահույս պատիվը կ'ընեն... ես երբեք խորհրդանշականություն ստրուկ մը չեմ»<sup>15</sup>:

Սիմվոլիստների «երկու աշխարհների մասին» եղած տեսությունով էր պայմանավորվում նրանց ստեղծագործությունների գեղագիտական, կրոնամիստիկական և սուբեկտիվ իդեալիստական բնույթը, որի հետ հեռավոր չափով առնչվում է նաև Մեծարենցի ստեղծագործությունների միստիկականությունը: Նրա երգերում երբեմն տեսանելի է դառնում բնության առարկաների ու երևույթների մեջ գերբնական ու անտեսանելի ոգիների միջամտությունը, որով և փորձում են հաստատել այն միտքը, թե Մեծարենցի մի շարք ստեղծագործություններում առկա են սիմվոլիզմին բնորոշ գծեր:

Անձնական ես-ի ու մանրուքների հետևից ընկնող մարդու էությունը ցերեկը տրոհվում է ու փոշիանում, դառնում շնչին ու ողորմելի: Այդ է պատճառը, որ բանաստեղծը գիրքերգություններում ստեղծում է ռոմանտիկ իդեալների աշխարհը: Սակայն հասարակությունից փախուստ տալով գիրքային երազային աշխարհը՝ Մեծարենցը արտահայտում է կյանքի ու մարդկանց նկատմամբ առողջ գաղափարներ, չի խորթանում մարդկանցից, չի ատում նրանց: Ընդհակառակը, «իրենը՝ ապրելու տենչն էր մանավանդ, կյանքին փարելու, կյանքին հետ ձուլվելու սիրատու ջանկությունը», «ապրելու ուրախությունը»<sup>16</sup>, — քերթողի մահվան առիթով գրված հոգվածում դիպուկ նկատել է Հարությունյանը: Իր ժողովրդին նվիրված բանաստեղծը ամեն կերպ աշխատում էր ազատվել «եսին տաղտկալի ոչնչաբանությունն», դեն նետել «անմարդկային անձնաբանությունները» և տոգորվել «բնության սիրով», «բոլոր գոյություններուն համադրական թրթռումովը տրոփուն» իր ձայնը դարձնել «տիեզերական հարաբերականության մը լարը»<sup>17</sup>:

Այս ամենի համադրությամբ դեռ իր ժամանակին կարդում ենք Արտաշես Հարությունյանի 1908 թ. հուլիսի 6-ի՝ Մալգարայից Մերութուն Պարսամյանին

<sup>13</sup> «Հառաջ». Փարիզ, 1928, № 79, էջ 2:

<sup>14</sup> Հարցի քննումը տե՛ս նաև է. Գ. Ջրբաշյան. Միսաք Մեծարենց. Երևան, 1977, «Մեծարենցը և սիմվոլիզմը» բաժնում:

<sup>15</sup> Միսաք Մեծարենց. Երկերի ժողովածու. Երևան, 1956, էջ 315:

<sup>16</sup> «Գիրքերի մահվան ճամփորդը», էջ 256:

<sup>17</sup> Միսաք Մեծարենց. Երկերի ժողովածու, էջ 269:



ուղղված նամակում: «...ինծի ճիշտ չի թվի... Մեծարենքը դատել symbolisme-ի տեսակետեն: Մեծարենք symbolisme ըլլալն սուր՝ բանաստեղծ էր: Symbolisme-ը սխալմունք մը եղավ իր մոտ: ...ուստի և, եթե ուզենք Մեծարենքը դնահատել, պետք է իր ճշմարիտ ընդունակությունները փնտռենք իր այն բանաստեղծություններուն մեջ՝ ուր symbolisme-ի հավակնություն չկա: ...նպատակս է անկեղծ մտածումս ըսել խնդրո առարկա վաղամեծ եղբայրակցիս մասին: Իսկ ինչ կը կրկնեմ, ճիշտ չպիտի ըլլա իր գործը դատել symbolisme-ի տեսակետեն»:

Այսպիսով, Հարությունյանը ժամանակի մշակութային կյանքի հասուն ըմբռնումով, դրական միջավայրի բազմաբարդ պայմաններում ու պահանջներում, օրյակտիվ մտածողի մտքի կշիռով նժարում է այժմ էլ քննություն բռնող իր առեւտրը: Դա խոր դիտողականության, արեւմտաեվրոպական ու հայ դրական կյանքի, հոսանքների ու դրանց փոխազդեցության հմուտ իմացությունամբ օժտված մտքի եղբայրացություն է:

Սիմվոլիզմական դրական ուղղությունը դավանող մի շարք գրողների ստեղծագործական զարգացման ուղին ցույց է տվել, որ նրանք լիովին չեն ընդունել այդ հոսանքի փիլիսոփայական ու գեղագիտական դրույթները: Սիմվոլիզմի տեսությունն շրջանակներից, այդ ուսմունքից բխող արվեստի «բացարձակ անկախության» գաղափարախոսությունից հեռու կանգնած արվեստագետները կարողացան հասնել հասարակական կյանքի որոշ արմատական հարցերի դեղարվեստական բացահայտմանը: Միսաբ Մեծարենցի գրական դավանանքի խնդիրը բացահայտելիս Հարությունյանը գրում է. «...պիտի գար օր մը, ուր ճաշակի ու դատողության բարեփոխությամբ մը, պիտի մոռնար symbolisme-ը և պիտի մնար ինչ որ էր: Այսպես եղած է արդեն symbolisme-ի հոսանքին տարվող շատ մը տաղանդավոր բանաստեղծներու մասին, Մոռեսս տը Ռենիե, Սամեն, Վերհարն և այլն»<sup>19</sup>:

Եվ իրոք, Վերհարնը՝ «... այդ խորաթափանց մտածողը, որին այնքան հետաքրքրում էր ազգերի ու պետությունների բախտը»<sup>20</sup>, կարողացավ ընկալել անցողիկ դարաշրջանի բոլոր հակասությունները՝ իր ամբողջ բարդությամբ: Նրա պոեզիան արտացոլեց ոչ միայն հասարակական հին ձևերի փլուզումն ու նեխումը, այլև կանխադաս նորը՝ կապված լավագույն հույսերի հետ: Վերհարնը այլպիսին է դառնում ապագայի զարգացումը ներկայում ընկալելու կարողությամբ, խառնաշփոթ հասարակական շարժման մեջ առաջադեմ ուժերին տեսնելու ունակությամբ, մոտեցող հեղափոխության երաժշտությունը պոեզիայում արտահայտելու կանխազգացումով: Նա ամփոփում ու արտացոլում է նախորդ պոետիկական ավանդույթների հարստությունը (ոչ միայն բելգիական ու ֆրանսիական, այլև համաշխարհային): Վերհարնի մոտ կա խոր ու պայծառ թախիծ, որը բնորոշ է մեծ արվեստագետներին: Նրա պոետական ստեղծագործությունները պարփակում են ազգակցական երկու սկիզբ. մի կողմից կանխատեսել ապագան («Յնորական գյուղեր», «Յնորական դառանցանք», «Արշալույսներ»), մյուս կողմից՝ հեղափոխական մարտիկի ինքնադիտակցություն («Տրիբուն», բանաստեղծությունը «Ըմբոստ ուժեր» շարքից և այլն): Վալերի Բրյուսովը, խոսելով Վերհարնի պոետական նոր ձևերի մասին, գրում է. «...Վերհարնը ստիպված էր գտնել պոեզիայի նոր ձևերը, որպիսի կարողանար պոեզիայում մտցնել ժամանակի բոլոր կողմերը..., ժամանակակից համաշխարհային կյանքի ընթացքը» (Статья «О стихотворной технике») <sup>21</sup>:

Հարությունյանը հարցի նորը ընկալումով ու ճեշա կողմնորոշումով է գնահատում Վերհարնի առաջավոր հայացքները: Վերլուծելով «Յնորական գյուղեր» շարքը, այն արժեքավորում է որպես «գլուխգործոցների շարք», որը

<sup>18</sup> Տպվել է «Կյանք և արվեստ» տարեգրքում. Փարիզ, 1931, էջ 6:

<sup>19</sup> Նույն տեղում:

<sup>20</sup> Վալերի Բրյուսով. Հայաստանի և հայ կուլտուրայի մասին. Երևան, էջ 187:

<sup>21</sup> «История зарубежной литературы конца XIX—начала XX вв». М., 1970, с. 233.

«խուլ ընդվզումին, իր ժամանակեն տառապող հոգվուն համար, հպարտ մարտիրոսության անաղմուկ դուցադներգությունն է»<sup>22</sup>։ Քերթվածներից «Ատաղձագործը», «Ջրաղացպանը», «Գերեզմանափորը» նա անվանում է հերոսական երգեր, իսկ «Իարբինը»՝ տխրանյան։ Հավանական է, վերջինս այդ բնութագրմանն է արժանացել կյանքի խտացված ճշմարտության, աշխատավորական զանգվածների (հանձին դարբնի) ինքնագիտակցության աճի, խեղդված արդարության, աղքատներին ծունկի բերելու ահազանցումից ծնված ցասումն արտահայտող ռեալիստական պատկերների համար։ Ցասում, որ պիտի իրավունք նվաճեր «ապրելու ու մեծանալու ըստ իր ուժին»։

Սիմվոլիզմի գեղագիտական դրույթներից հեռացած Վերհարներ շոշափում էլ տիրող անհավասարությունը միմիայն ուժով վերացնելու, ժողովրդի պայքարին մերձենալու գաղափարը, որը և թույլ է տալիս Հարությունյանին ելրակացնելու. «Ինք կը հավատա լավագույն մարդկության մը կատարելության։ Ու իբր գերագույն միտքարություն, կը նկատենք թե, անհունորեն երկարող գիշերվան մեջ, առավան մը դեմ, հուսատու արշալույսներ կը ճերմակին»<sup>23</sup>։ Այստեղ տեղին է հիշել Զապել Նսայանի այն եզրակացությունը, թե Արտաշես Հարությունյանը զարմանալի սրատեսություն և թափանցողության ճշտություն ունի ժամանակակից ֆրանսիական բանաստեղծների վերաբերյալ<sup>24</sup>։

Ժամանակին կողմնակալ վերաբերմունք արտահայտվեց նաև Սիամանթոյի գրական ժառանգության նկատմամբ<sup>25</sup>։ Իրականության ճանաչողության ու արտացոլման տարբեր եղանակների դրսևորումները, ստեղծագործական հզոր երևակայությամբ կատարված ընդհանրացումները, զգայական բնույթ երող պատկերների կենդանի նկարագրությունները, ներշնչող ուժ ունեցող տրամաբանական դատողությունները և, վերջապես, երգերի հուզական հագեցվածությունն ու գեղարվեստական պատկերավոր մտածողությունը գիտվեցին որպես անկումային տրամադրությունների արտահայտություն<sup>26</sup>։ Այդ մասին Վրթ. Փափազյանը գրել է. «Նոր բանաստեղծին գրվածքներուն մեջ առանձնապես արտասովոր էին քրմային, մեհենական ոճը, խորհրդանշական արտահայտությունները և դեպի շմեցնող խորություններն արշավող ձգտումները։ Համեմատություններն ու պատկերավորումները, կռանի հսկա հարվածներու ուժն ունեցող յուրաքանչյուր շեշտը, մտապատկերներու և ոլորուն դարձվածքներու խելահեղ խոնումը, թանձր գույներու կոտակումները... այդ ամենը այնքան հախուռն էին և նորանշան, որ նախապես շատերը—նույնիսկ լուսավոր մտքեր— բարբաջանք, բառամոլություն և decadence-ի խենդություն համարեցին Յարճանյանի բանաստեղծությունները»<sup>27</sup>։

Այսպես, 1912 թ. «Ոստան» ամսագրում, «Գրական շարժում» խորագրի տակ լույս տեսավ Սիամանթոյի ամբողջական գործի վերլուծությունը։ Հողվածագիրը<sup>28</sup> (որոշ վերապահումներով), արժեքավորելով քերթողի ստեղծագործական ժառանգությունը, այն կարծիքն էր հայտնում, որ ժամանակն անգույն է իր պահանջների, ձգտումների ու նորաձևությունների հանդեպ։ Անդրադառնալով Սիամանթոյի երկերի արվեստին, նա զնահատում է Սիամանթոյի որպես խոսքի վարպետի, բայց ընդգծում է երկի «թերությունը»։ «Հեղինակը...

22 «Արևելյան մամուլ». Կ. Պոլիս, 1907, № 11, էջ 271։

23 Նույն տեղում։

24 Տե՛ս «Մասիս». Կ. Պոլիս, 1907, № 26, էջ 546։

25 Հարցի բնույթն տե՛ս նաև Հ ե կ ս ո Ր Ռ շ տ ու Ն ի. Սիամանթո. Երևան, 1970, էջ 133—141։

26 Սիամանթոյի իսկատիպ տաղանդը ժխտում էին Լևոն Սարգսյանը (Ատոմ Յարճանյան, «Դույզաններեն». «Մուրճ», Թիֆլիս, 1902, № 1), Մինաս Բերրերյանը («Գրական ակնարկներ», «Արարատ». էջմիածին, 1908, Ծ—Զ, էջ 493) և ուրիշներ։

27 Վրթ. Փափազյան. Պատմություն հայ գրականության. Երկրորդ գիրք, Կ. Պոլիս, 1914, էջ 142—143։

28 Հավանական է «Ոստանի» խմբագիր Միքայիլ Շամտանճյանն է։



չի նայեր այնքան բառերու դաշնութիւնը, որքան արտահայտիչ ուժին։... Կըրկ-նութիւններն ալ չեն պակսիր անոր մէջ ու, ի վերջո, միօրինակութիւն անողոր յայացումը կը պատեն ընթերցողը։ Թերեւ ռճի այդ միօրինակութիւնը, նյութերու քիչ թէ շատ իրերանմանութիւններն կը բխի, որքան ալ ստեղծագործ ըլլա պատկերներ հղանալու մէջ Յարճանյանի տաղանդը»<sup>29</sup>։ Ու այս «միօրինակութիւն» վրա որպէս բացասական կողմ ավելացնում է սիրո քնադերգութիւնն այլապէս, այն թշուր տեսակետով, որ քերթողի քնարը հավասարապէս պիտի հնչեցներ բոլոր մոտիվները. «Չեմ գիտիւ թե տիեզերական զրականութիւն միջ կա՞ն նման օրինակներ։ Յարճանյան զղալով ատիկա կ'ըսե։

Մոռացումներու մոխիրին մէջն է, որ յրեզ պատանեցի,

Ո՞վ երկրայկի, եսանվեր ու սնոտի սեր,

Եվ չի աճեցա հոսակ խարտաշ եղեգներէն ո՛չ դախիս և ո՛չ պսակ,

Եւ ո՛չ ալ զոգողը երգ մը, բեղի համար իմ ազատածուի քնարես...»<sup>30</sup>։

Զմոռումնաք, որ արմատի գործերն ինքնատիպ մոբողջութիւն են, ինքնուրույն գեղարվեստական «օրգանիզմ», որոնք ունեն իրենց «սեփական կյանքը» և իրականութիւնը։ Դրանք պատմական երևույթ են<sup>31</sup>։ Ժողովրդի բախտով ապրող իսկական բանաստեղծը՝ Սիամանթոն, թեկուզ արտասահմանում, տնկարող էր աչք փակել իրականութիւնն աղետարար տեսարանների, ողբերգութիւնն անդէ ու երգել, ինչպէս ինքն է ասել, «սնոտի սեր» (բայց չզգալով ալ պակասը)։ «Սիամանթոն ամեն ատեն ու ամեն պարագաներու մէջ պիտի ըլլար այն ինքնատիպ, հզոր, արտասովոր ու նորօրինակ բանաստեղծը, որ է»<sup>32</sup>, — դիպուկ նկատում է Հարությունյանը։ Նրա սերը պատմական տվյալ հանգամանքներում, հայ ժողովրդի ջարդերի օրերին, արտահայտվում է ոգորման տենչը մշտանորոգ սրահնու մէջ, որը առավել գնահատելի է, բայց ոչ բնավ պատճառ, որ ապագան, ապիստեմ մենք ու զաւր սերունդները, «ավելի ժաւտ ըլլան իր փառքի մասին»<sup>33</sup>։ Սերունդները «նախորդներուն մէջ... սիրո երգը» դրսևելով չէ, որ գնահատել են ու գնահատելու են մեծ քերթողների զրական վտարակր ու ոչ էլ այն չափանիշով, թե աշխարհի զրականութիւնն մէջ կա՞ ալ հարեանասեր քերթող, որի քնարը սիրո երգեր չի հնչեցրել։ Սիամանթոնին Հարությունյանն անվերապահօրէն տվել է իր հաստատուն տեղը, «որպէս հայ դրականութիւն... փառքերէն մեկը» և նրա քերթողական արվեստը ևս գնահատել ըստ արժանիւնի<sup>34</sup>։

Դարասկզբի արևմտահայ զրականութիւնն մէջ Զիֆթե-Սարաֆի «Միամիտի մը արկածները» վեպը զրականագիտական բանավեճի առարկա դարձավ։ Մտերի բախման հիմքում երկի «անբարոյականութիւն» հարցն էր։ Զիֆթե-Սարաֆի երկը ռեալիստական պատկերներով վեր է հանում իրականութիւնն հոռի երևույթներու։ Հեղինակի մանրախույզ, համբերատար դիտումները, ելրոպական հոռի բարբերի ռեալիստական նկարագրութիւնները, Հովհաննէս Գալանճյանի բնորոշումով՝ «տեղար մտքերու վրա հակառակ ազդեցութիւնն զործեցին»։ «Լույս», «Մաղիկ», «Սուրհոյակ» և այլ պարբերականներում վերջիւ ի վերջ ընդհատուեց զրական գրոհ սկսեցին Զիֆթե-Սարաֆի դեմ։ Նրանց վեճի կենտրոնում հեղինակի երկի անբարեկամատ ազդեցութիւնն ինդիքն էր, հայ պարկեշտ օրիորդների պատիարակութիւնն զործում երկի վնասակար ներգործութիւնը։

Զիֆթե-Սարաֆին պաշտպան կանգնեց «Մաղիկ» հանդեսի խմբագիր Մի-րայիլ Շամտանճյանը<sup>35</sup>։ Վեպի պաշտպանութիւնը հանդես եկան Ա. Զոպան-

29 «Ոստան». Կ. Պոլիս, 1912, № 6, էջ 218, 219։

30 Նույն տեղում։

31 «Эстетика». М., 1957, с. 603.

32 «Իշերվան ճամփորդը», էջ 258։

33 Նույն տեղում, էջ 219։

34 Սիամանթոնի ստեղծագործական ժառանգութիւնը ժամանակին բարձր գնահատեցին Գ. Վարուժանը, Ա. Զոպանյանը, Զ. Նսալանը. Վ. Թեքեյանը և ուրիշներ։

35 Տե՛ս «Մաղիկ». 1904, № 26, էջ 163։

յանը, Զ. Եւսեանը, Հարություն Ալփիարը, Մեքուժան Պարսամյանը: Ա. Հարությունյանը առաջաբան գրեց Զիֆթե-Սարաֆի վիպակի համար: Գնահատելով վիպասանի դիտողականությունը, ճարտար պատմելաձևը, բծախնդրությունը, տաղանդի մեծությունը, քննադատը գրում էր, որ անբարոյական գրականություն մտանգի դեմ հուզվողները ապահովաբար նրանք են, ովքեր ձգտում են իրենց մաքուր հողի ցույց տալ և ընկնում են Տարտյուֆի ծիծաղելի պատմության մեջ: «Զիֆթե-Սարաֆ» ողջախոսության գրադեպ մըն է ուտեմն, բայց անբարոյականության գրագեպ մը չէ,— եզրակացնում է Հարությունյանն ու ավելացնում:— Այն գրականությունը, ղոր կընես, անկեղծ է, քանի որ իր խառնրվածքին գրականությունն է ան, ինչպես է Զուլայինը, Բուրժեհինը, Պեռնոյինը, որոնց մոտ մտադիր հաճախումի մը մեջ հասունցած է տաղանդը: Կթվի, թե մեր մեջ ոչ ոք իրմե ամենի լավ նճանչնա արգի ֆրանսիական վեպը»<sup>36</sup>:

Զիֆթե-Սարաֆի պաշտպանությանը նվիրված հոդվածի տպագրությունը մեկամյա վաղեմություն ունեւր, երբ ֆրանսիական գրականագիտության մեջ քննարկման առարկա դարձավ գրականության «անբարոյականության» խընդիրը: Ավելի ճիշտ, Բերանժեի նախադասությամբ գումարվեց միջազգային համաժողով, որը պայքարում էր պոռնոգրաֆիայի դմ: Արձագանքելով գրական բանավեճին, Հարությունյանը մեկ անգամ ևս պաշտպան է կանգնում ռեալիստական գրականության գլուխգործոցներին: Քննադատը գրում է, որ գրականության անբարոյականության օոդի տակ թերևս «...պետք պիտի ըլլար դուրս նետել, օրինակի համար, Զոհրապը: Պետք պիտի ըլլար վտարել Զիֆթե-Սարաֆը, իր «Միամիտի մը արկածներ»-ուն հետ: Ու պիտի ստիպվեինք դռները փակել տիկին Եսայանի երեսին և ձերբակալել տալ հոռալի Ալփիարը, հանուն հանրային բարոյականության: Հապա՞ թլկատինցին. ան ալ անբարոյական չէ՞՝ միթե, իր իրապաշտ պատկերներու մեծ մասին մեջ: Հապա՞, Դուրյանը. կարելի՞ էր մոռնալ «Վարդ և Շուշանը»: Բայց ստիկա էշմարիտ սնանկությունը պիտի ըլլար: Որերո՞ւ պիտի մնար այն ատեն մաքրված թատերաբեմը»<sup>37</sup>:

Հարությունյանը միաժամանակ զգուշացնում է, որ գրականության մեջ նման հերքումները հաճախ խտրություն են դնում արվեստագետների առջև, ինչպես պատահեց Ֆլոբերի, Բոդլերի, Ռիշպենի հետ:

Արտ. Հարությունյանի գրաքննադատական հոդվածները աչքի են ընկնում գրականության պատմության ու տեսության հիմնավոր իմացությամբ, մտքի փրկիսոփայական դաստիարակությամբ: Նա չունի տապալորություններ ազդեցությանը գրված «վերլուծումներ»: Գրախոսի քննադատական հոդվածներում համակցված է երկի ղեղագիտական, բարոյա-էթիկական, փրկիսոփայական ու պատմական օրինաչափությունների գիտական վերլուծությունը: Քրննադատի գնահատումներն ու ընդհանրացումները ներկայումս էլ այժմեական են իրենց օբյեկտիվ նշանակությամբ:

#### АРТАШЕС АРУТЮНЯН—ЛИТЕРАТУРНЫЙ КРИТИК

А. Г. НААПЕТАН

(Резюме)

В статье раскрывается роль западиоармянского литературного критика Арташеса Арутюняна в признании литературных достоинств Мисака Мецаренца, Сиаманто и Оника Чифте-Сарафа. Арутюнян правильно сориентировался в сложной обстановке литературной борьбы. Он реально оценивает произведения названных авторов, а также интерпретирует литературное направление Мецаренца и Верхарна.

36 «Գիշերվան ճամփորդը», էջ 223:

37 «Արեւելյան մամուլ», 4. Պոլիս, 1908, № 30, էջ 704: